Թ ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 2 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1906 — ԹԻՒ 842

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր. վեցամսեայ 7 "
Արտասահմանի համար տարեկան 15 ֆր. վեցամսեայ 8 «
Ամերիկայի համար տարեկան 3 տլ. վեցամսեայ 1.50 «

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. Երեքէն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ:

Վառնայի համար ձեռքէ 10 սանթիմ է

# ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal „Charjoum" Varna (Bulgarie)

Պուլկարիոյ համար ձեռքէ 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռքէ 20 ՍԱՆԹԻՄ

Դրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

### «ՏԱՍ ՏԱՐԻ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ»

Արդէն այս անունով բրոշիւրը յանձնված է տպագրութեան.

Բրոշիւրի նպատակն է, առանց խծբծանքի Դաշնակցութիւնը մէջ տեղ դնել իր իսկութեամբը եւ միեւնոյն ժամանակ փաստել թէ՝ իմ պայքարը սկսված է շատ հին ժամանակից եւ վերջերս միայն սուր կերպարանք ընդունեց. Բնական է որ բրոշիւրի մէջ փաստող դօկիւմանները մեծ տեղ պիտի գրաւեն.

Բրոշիւրի գինը տպագրութիւնից վերջ 3 ֆրանկ է լինելու, իսկ բաժանորդ գրվողի համար 2.50 ֆր.

Դիմել «Շարժում»ի Խմբագրութեան

Café Promenade Vienne

Այս շքեղ քոֆէն կը գտնուի Վիէննա Ֆրանց Ժօզէֆ քարաֆին վրայ. կըստանայ զանազան հայերէն թերթեր. Առհասարակ բոլոր հայ կամ արեւելքցի վաճառականները այս տեղ կը յաճախեն. Ուստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին դիմել հոս, ուր պիտի գտնեն իրենց յարմար դիւրութիւններ եւ անհրաժեշտ տեղեկութիւնները.

## ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Անցեալ օր «Դրօշակ»ում, երէկ էլ «Ներիտասարդ Հայաստան»ում կարդացի Արեւելեան Բիւրոյի մի պաշտօնական գրութիւնը՝ հանդէպ տեղի ունեցած եղբայրասպանութիւնների.

Անշուշտ այդ կարգադրութիւնը անող բիւրոն կարող էր նոյն ձեւով վարվել եւ եղբայրասպանութեան հէնց առաջին դէպքում, ոճրագործ կրկնութեան առջեւը առնելու համար. Ինչու՞ բիւրոն թերացաւ իր այդ պարտականութեան մէջ. սա մի խոշոր հարցական է, որ ինհարկէ պէտք է ժամանակին դրվի Արեւելեան Բիւրոյի առջեւ Դաշն. Ընդհանուր ժողովի կողմից. եթէ ժողովին մասնակցողների համար Հնչակեանն էլ հայ է, ինչպէս դաշնակցականը եւ ժողովականները զգալու ազնուութիւնը եւ կարողութիւնը պէտք է ունենան ըմբռնելու թէ՝ միայն տաճիկ եւ ռուս կառավարութիւնը կարող են մի չնչին պատճառով հայ յեղափոխականին զրկել հայի համար այնքան սուղ եւ արժէքաւոր կեանքից.

Զարմանալին այն է որ Բիւրոն իր հրաման շրջաբերականի մէջ գործ է ածել յանձնարարել բառը.

Միթէ կարելի չէ՞ր խօսել աւելի խիստ ոճով, որոշելով միանգամայն եւ պատիժը այդ կարգադրութեան հակառակ վարվող դաշնակցականի համար. յանձնարարութիւնը կարող է եւ չը կատարվել, քէնի բան չէ՞, եթէ ոև է պատիժ գոյութիւն չունի բարի թելադրութեան չենթարկվողի համար.

Առանց պատիժի եւ ստիպողականութեան յանձնարարութիւնները արժէք չունեն—մանաւանդ երբ գործը գազանցած մի տարրի հետ է.

Բայց կարելի է որ բիւրոյի յանձնարարել խօսքը դաշնակցական ընկերները, զինուորները հրաման ընդունին եւ համոզվեն թէ՝ այդ հրամանին չենթարկվողը եւ պէտք է պատժի ենթարկվի. Այն ժամանակ ուրեմն բիւրոն ներկայանում է մի կենդրոնական վճռող եւ որոշումներ կատարել տուող մարմին. Բայց չէ՞ որ դա կենդրոնացում կը լինէր, իսկ Դաշնակցութիւնը ապակենդրոն կազմակերպութիւն է!!!

Բայց ոչ. իրօք դաշնակցութեան ապակենդրոնացումը միայն թղթի վրայ է. տեղը եկաւ կենդրոնով է, տեղը եկաւ ապակենդրոն... Ու Արեւելեան Բիւրոն, մարդկանց աչքին փոշի փչելու համար է միայն որ գործ է ածել յանձնարարել բառը, այսինքն իբր թէ ցոյց տալ եւ հասկացնելու «տեսէք, հասկացէք, մեր ապակենդրոն կազմակերպութեան մէջ բիւրոն ոչ մի իշխանութիւն չունի. նա միայն կարող է յանձնարարել ընկերներին եւ մարմիններին—բայց ոչ հրամայել... եւ երբ որ ոճիրները շարունակվեն, կարելի է պատասխանել—«ինչ անենք եղբայր, մեզ չը լսեցին. Մենք իշխանութիւն չունինք մեր մարմինների վրա, թելադրել միայն կարող ենք. Ու ահա այսպիսի բարդ խնդիրների միջոցին միշտ եւ ամեն ժամանակ կազմակերպութիւնը տուժում է. որովհետեւ տգէտ եւ գռեհիկ գլուխները ապակենդրոնացման եւ կենդրոնացման տարբերութիւնը չեն հասկանում, այդ վարչական ձեւերը, առանձին առանձին վերցրած չեն ըմբռնում.

Մի կոմիտէ կամ կենդրոնական կոմիտէ ապակենդրոնացում հասկանում է իր ուզած ձեւովը վարվել—ընկեր սպանել,—ընկեր արտաքսել Դաշնակցութիւնից... մի ուրիշը լաւ ըմբռնում է իր իրաւասութիւնը բայց յանկարծ բիւրոն է ներկայանում հրամայողի դերում. Եւ այդպիսով ստեղծվում է քաոսը Դաշնակցութեան մէջ. Օրինակ Ղարսեցիներին, որոնց մէջ էր երբեմն եւ Նոհրատեանը ու Եգիպտոսում այժմս տեղաւորված գործիչ!! եթէ թողէին. բոլոր Հնչակեաններին եւ այլ կուսակցութեան պատկանողներին կոտրել կը հրամայէին.., նոյնպէս եւ Թ. վրիզցիները այլ կուսակցութեան պատկանողներին կոտորելու շատ մեծ ախորժակ ունեն,...

Եւ զարմանալին այն է որ կոտորելու ախորժակ ունեն եւ մտաւորական ղեկավարները. «Մուրճ»ի խմբագիրը «Ալիք»ի խմբագիր տիրացու Ահարոնեանին բնորոշող յօդուածում հետեւեալ խօսքերով է բնորոշում այդ տիրացու մտաւորական վարիչ պարոնին—«նա (Ահարոնեանը) բանի ուժի, միջոցների անխտրականութեան մի խելագար ջատագով է փրփուրը բերնին պաշտպանում է այն միտքը թէ՝ ամեն արհաւիրք ներելի է յեղափոխականին. «Թող մասսաներ զոհուին, կոտորուին, ապրելու արժանի են քչերը»

Ինհարկէ այդ տիրացուի ձեռքը եթէ մի այլ ճօնակ տաս կամ մի ռումբ նետելու այս ինչ թշնամու վրա—նա կը հրաժարվի,,. տակը իր անձին վնաս կայ. ինքզինքը այն քիչերից է համարում որ բազմաթիւ զոհերի շնորհիւ պէտք է ապրի. Թուածս պարոնները միայն կոտորել հրամայելու եւ թելադրելու ընդունակ մարդիկ են. իրենք վըտանգի մէջ չեն մտնի. Ներկայի Եգիպտոսի գործիչը, Ղարսից փախել է եւ շունչը Եգիպտոսում առել, որովհետեւ Հնչակեանները ուզեցել իրենց սպանված ընկերների փոխարէն այդ վարձկանին սպանել. Արդեօք այդ փախստականի գործն էլ պէտք է քննվի ըստ բիւրոյի նոր հրահանգի—թէ անցածը մոռցված է..

ՎԱՒԴՕ

---

Նորին Վեհափառութեան Տ. Տ. Մկրտչի Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց.

Դաշբուռուն գիւղի բնակիչ Մարգար Առաքելեանից՝ ամենախոնարհ զեկուցում.

Ենթարկել ամենախիստ վիրաւորանքի իր համոզման, իր դատողութիւնների ազատ յայտնելուն համար այն մարդոց կողմից, որոնք իւր աշխարհի բղաւում են «համոզմունքի ազատութիւն» եւայլ մեծադղորդ խօսքեր—աւելի քան անտանելի է.

Այն դերը Վեհ. Տէր, որ խաղում են դաշնակցութեան անդամները մեզանում Ձեր տուած յայտնի կոնդա-

